

ՌՈՒԶԱՆՆԱ ԴՈՒՈՅԱՆ

Վ.Ս.ՇՈՒԿՇԻՆԻ «ԻՆԶՊԵՍ ԷՐ ՍԵՌՆՈՒՄ ԾԵՐՈՒՆԻՆ»
ՊԱՏՄՎԱԾՔԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԼԵԶԿԱՈՃԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աշխարհի տարբեր ազգերի միջնակության կապերի զարգացման առումով զեղարվեստական թարգմանությունը և նրան առաջադրվող խնդիրները միշտ էլ արդիական են եղել բոլոր ժամանակներում:

Գ.Գալեչիլաձեն կարծում է, որ թարգմանության լիարժեք, սպառիչ սահմանումներ տալն անհնար է և անիմաստ, «որովհետև յուրաքանչյուր դարաշրջան իր պահանջներն է առաջադրում... և որովհետև զեղարվեստական թարգմանությունը ստեղծագործության ձև է, իսկ սահմանումը... բացառում է ստեղծագործությունը»: Նա առաջադրում է թարգմանության ռեալիստական մեթոդի խնդիրը՝ նկատի ունենալով «քնագրի զեղարվեստական իրականության, քնագրի ստեղծման պատմական հանգամանքների և ազգային առանձնահատկությունների, հեղինակի աշխարհայացքի, նրա անհատական գծերի, ոճի և համակողմանի ուսումնասիրությունը»¹: Սակայն «թարգմանությունը, որպես հաղորդակցության երկկողմանի ակտ, նախ և առաջ լեզվական գործընթաց է, քանի որ ա) թարգմանության առարկան տեքստն է, որը լեզվական արտահայտություն ունի, բ) թարգմանությունը, լինի գրավոր թե բանավոր, կատարվում է բացառապես լեզվական միջոցներով և գ) թարգմանությունը միջլեզվական հաղորդակցության միջոց է, և դա նրա հիմնական գործառույթն է»²:

Կարծում ենք հետաքրքիր կլինի պարզել, թե լեզվական ինչ գործընթաց են իրականացրել հայ թարգմանիչները հայերեն փոխադրելով Վասիլի Շուկչինի վերոնշյալ պատմվածքը: Գրողի պատմվածքները համահավաք գրքով թարգմանել է միայն Արմեն Հովհաննիսյանը, իսկ մոտ մեկ տասնյակի հասնող առանձին պատմվածքներ թարգմանել են Վ.Ամարյանը, Ս.Ակրտչյանը, Արմ.Ինճիկյանը, Գ.Սիմոնյանը, Վ.Վարդանյանը, Մ.Մարգարյանը, Լ.Աղյանը, որոնց թարգմանվածքները (գիտաբառն ըստ պրոֆ. Ֆ.Հ.Խլաթյանի) զետեղված են «Գրական թերթ», «Երեկոյան Երևան» թերթերում և «Սովետական Արթեր-ջան», «Սովետական գրականություն» ամսագրերում: Վ.Ս.Շուկչինի «Как

¹ *Г.Гачечиладзе*, Введение в теорию перевода, Тбилиси, 1970 г., стр. 141.

² *Ա.Հ.Նազարյան, Դ.Գ.Բաղդասարյան*, Թարգմանաբանական ուսումնական ձեռնարկ, Երևան, 2000 թ., էջ 23:

помирает старик» պատմվածքը՝ թարգմանել են Ա.Յովհաննիսյանը («Ինչպես էր մեռնում ծերունին», Վ.Շուկչին, «Պատմվածքներ», Երևան, 1979 թ.), Ս.Սկրտչյանը («Ինչպես մեռավ ծերուկը», «Երեկոյան Երևան», 31.01.1976 թ. հ. 26, էջ 3), Արմ. Ինճիկյանը («Թե ոնց էր մեռնում ծերուկը», «Գրական թերթ», 20.05.1977 թ., հ.19, էջ 7): Մեր խնդիրն է պարզել, թե հայ թարգմանիչներին որքանով է հաջողվել իրականացնել գեղարվեստական թարգմանությանը ներկայացվող պահանջները, ինչպես են թարգմանվել՝ ա) խոսակցական բառաշերտը, բ) հասարակաբանություններն ու գեեկաբանությունները, գ) դարձվածային միավորները, դ) քերականական փոխակերպումները: Կա՞ն արդյոք թարգմանական սխալներ, կատարվե՞ն են ձևաբանական և շարահյուսական միջոցների հմուտ կիրառումներ՝ պահպանելով ստեղծագործության ոճական առանձնահատկությունները և բովանդակային համապատասխանությունը, թարգմանիչները հարազատ են մնացել արդյոք հեղինակի ոգուն, նրա ներկայացրած իրականությանը և, վերջապես, հասե՞ն են արդյոք իմաստային, ոճական, գործաբանական համարժեքության, այսինքն նույնականության⁴:

Նախ խոսենք Շուկչինի ստեղծագործության գրականագիտական և լեզվաոճական որոշ առանձնահատկությունների մասին՝ այդ հենքի վրա էլ ներկայացնելով թարգմանվածքների զուգադրական ուսումնասիրությունը:

Շուկչինի հերոսները Ռուսաստանի ամենախուլ անկյուններում բնակվող գյուղացիներ են, որոնք, անուղղակիորեն շփվելով քաղաքակրթության բերած «օգուտներին», ահավոր տազնապ են ապրում:

Գրողը արծարծում է ռուսական արձակի համար ավանդական, ընթերցողին քաջ հայտնի «ռուս տարօրինակ մարդու» թեման:

Ըստ գրաքննադատ Լև Անիմդսկու՝ Շուկչինը հայտնագործում է հոգեբանական նոր կոնֆլիկտ: Նա նշում է նաև, որ գրողը չէր ընկնում ճկունության և հարդարման տեսլից, նույնիսկ նկարագրություններն էլ այնքան չէր մշակում. ավելի շատ հոգ էր տանում սյուժեի և հերոսների խոսքի մասին⁵:

Իրոք, գրողի լեզուն պարզ է, մատչելի՝ գրված հասարակաբան ոճով, ժողովրդական կոլորիտին բնորոշ հյութեղ երանգներով, բավականին շատ են հասարակաբանությունները, հերոսների խոսքը համեմված է դարձվածքների հարուստ պաշարով: Ոճավորման նպատակով Շուկչինը վարպետորեն օգտվել

³ В. Шукшин, Рассказы, Москва, 1979 г.

⁴ *Նույնականություն* տերմինը (ինչպես և համապատասխան *նույնական* ածականը) գործածվում է մի շարք գիտակարգերում: Թարգմանության տեսության մեջ այն սահմանվում է որպես թարգմանության տեքստի ճշգրիտ համապատասխանություն ելակետային տեքստին, ինչը ենթադրում է նրանց լիակատար համընկնումը: Տե՛ս Ա. Դ. Նազարյան, Գ. Գ. Բաղդասարյան, նշվ. աշխ., էջ 13:

⁵ Լև Անիմդսկի. Գրողը, ռեժիսորը, կինոդերասանը, «Երեկոյան Երևան», 29.06.1976 թ., հ.152, էջ 3:

է խոսակցական լեզվի բոլոր դրսևորումներից՝ պատումին հաղորդելով աշխուժություն, ժողովրդականություն, ազգային լեզվամտածողություն: Հերոսների խոսքը համոզիչ է, հոգեբանորեն պատճառաբանված:

Նրա նկարագրած գեղարվեստական իրականությունն այնքան էլ դյուրին չէ փոխադրել հայերեն, մանավանդ որ գործ ունենք խոսակցական ոճի հետ, որն առաջին հայացքից հեշտ է թվում, սակայն գեղարվեստական ստեղծագործության արժեքների պահպանման առումով բավականին դժվար է:

Նախ մի քանի խոսք պատմվածքի բովանդակության մասին:

Ծերուկը զգում է, որ մահը մոտեցել է, սարսափում է այդ մտքից, բայց, այնուամենայնիվ, մտածում է կնոջ և երեխաների մասին՝ վերջին պատգամները հղելով նրանց: Նա անհանգստանում է. կինն այդ սառնամանիքին գերեզմանը ում պետք է փորել տա: Եվ երբ կինն առաջարկում է միակ հավը մորթել, ծերուկը պատվիրում է հավը տալ հարևան եզորին, որպեսզի նա իր գերեզմանը փորի: Այսինքն՝ մահվան մահճում անգամ նա մտածում է իր մերձավորի մասին:

Համեմատությունն սկսենք վերնագրի («Как помирая старик», «Ինչպես էր մեռնում ծերունին» (Ա.Հովհաննիսյան), «Ինչպես մեռավ ծերուկը» (Ս.Սկրտչյան), «Թե ոնց էր մեռնում ծերուկը» (Արմ. Ինճիկյան)) թարգմանությունից նկատելով, որ *помираю*⁶ բառը Ա.Հովհաննիսյանն ու Արմ.Ինճիկյանը թարգմանել են անցյալ անկատար ժամանակաձևով (*մեռնում էր*), իսկ Ս.Սկրտչյանը՝ անցյալ կատարյալով (*մեռավ*): Կարծում ենք, որ Ս.Սկրտչյանը ճիշտ չի թարգմանել՝ «Ինչպես մեռավ ծերուկը»: *Как* դերանունը *ինչպես* գրական համարժեքով են փոխարինել Ա.Հովհաննիսյանն ու Ս.Սկրտչյանը, մինչդեռ Արմ. Ինճիկյանը, նկատի ունենալով պատմվածքի՝ ժողովրդախոսակցական ոճին պատկանելու հանգամանքը, ընտրել է *ոնց* ձևը: Գրողի լեզվի իրական պատկերը հեղինակի խոսքն է, որտեղ գրողը բավականին ազատ է և կարող է օգտվել լեզվի արտահայտչական բոլոր հնարավորություններից, և որքան էլ որ հերոսի խոսքը պայմանավորված է «խոսողի մտավոր զարգացմամբ, աշխարհայացքով, խառնվածքով ու ճաշակով»⁷, միջավայրով, մասնագիտությամբ, կրթությամբ, երկխոսության նյութով, այնքան էլ հեղինակի խոսքը պետք է տարբերվի հերոսի խոսքից և նույնիսկ որոշ չափով հակադրվի նրան: Մինչդեռ թարգմանվածքներում մենք նկատում ենք հետևյալ պատկերը: Ա.Հովհաննիսյանի թարգմանվածքում հեղինակի խոսքը, իրոք, հակադրվում է հերոսի խոսքին, որովհետև այն մշակված է ու հղված և ավելի հստակ.

...Վաղուց արդեն թույլ էր, շուրջ մեկ ամիս, բայց այսօրվանը մի առանձնահատուկ բուլություն էր ... (էջ 270):

⁶ С. И. Ожегов, Словарь русского языка, Москва, 1988 г., стр. 454.

⁷ Գ.Բ.Տահուկյան, Ֆ.Հ.Խլղաթյան, Հայոց լեզու, ոճաբանություն (դասագիրք 9-րդ դասարանի համար), Երևան, 1998 թ., էջ 30:

Слаб он был давно уж, с месяц, но сегодня какая-то особенная слабость... (էջ 35):
Եզորը բարձրացավ նախաժառարանի վրա, ծեռքերը մտցրեց ծերունու տակ (էջ 271):

Егор встал на припечек, подсунул руки под старик (էջ 35):

Սա կու՛մ արեց ու քիչ մնաց խեղդվի (էջ 272):

Тот хлебнул - и чуть не захлебнулся (էջ 37):

Ս.Սկրտչյանի թարգմանվածքում հեղինակային խոսք են սարդել խոսակցական որոշ տարրեր, ինչպես.

...Վաղուց էր արդեն նա թուլացել, *ամիս առաջ...*

Եզորը կանգնեց *թաթերին*, ծեռքերը *խրեց* ծերուկի տակ:

Արմ.Ինճիկյանը թարգմանել է այսպես.

Տկար էր նա արդեն վաղուց, մոտ մի ամիս...

Եզորը ոտքը դրեց վառարանի սանդուղին. ծեռքերը մտցրեց ծերուկի տակ:

Սա *կոնծեց* ու քիչ էր մնում շնչափեղծ լինել:

Այժմ ընճենը թարգմանությունների բառային մակարդակը, ուր թարգմանիչները ելակետային տեքստի խոսակցական բառաշերտի շատ բառեր, փոխարինելով գրքային կամ չեզոք բառերով, մեր կարծիքով աղճատել են պատմվածքի ոճական ներդաշնակությունը:

Старик с утра начал маяться (էջ 35) նախադասության маяться⁸ խոսակցական բառը Ա.Յովհաննիսյանը թարգմանել է *չարչարվել*, Ս.Սկրտչյանը՝ *տնքտնքալ* խոսակցական համարժեքով, Արմ.Ինճիկյանը՝ *նվաղել* գրքային բառով.

Ծերունին առավոտից սկսեց չարչարվել (Ա.Յ., էջ 270):

Ծերունին առավոտից սկսեց տնքտնքալ (Ս.Ս.):

Ծերունին առավոտից սկսեց նվաղել (Արմ. Ի.):

Ըստ մեզ՝ ամենահաջող բառընտրությունը Ս.Սկրտչյանինն է:

Кто же жить не хочет, чужак-человек? (էջ 36) նախադասության *чужак*⁹ բառը Ա.Յովհաննիսյանը թարգմանել է *ցնդած* (խսկց.), Ս.Սկրտչյանը՝ *տարտաղ* (խսկց.), Արմ.Ինճիկյանը՝ *միամիտ* (չեզոք) ձևերով.

էղ ո՞վ ա, որ ապրել չի ուզում, էս մարդը հո ցնդած չի^{*} (Ա.Յ., էջ 271):

Ո՞վ չի ապրել ուզում, այ տարտաղ մարդ (Ս.Ս.):

էղ ո՞վ ապրել չի ուզում, միամիտ մարդ (Արմ. Ի.):

⁸ Ма'яться, ма'юсь, ма'ешься, несов. (прост.) Томиться, мучиться. Տե՛ս *С. И. Ожегов*, նշվ. աշխ., էջ 277: Ма'яться անկատ.խսկց. 1. աշխատելուց ուժասպառ լինել՝ հալումաշ լինել՝ հոգնել՝ հյուժվել՝ չարչարվել, պարտասել: 2. չարչարվել, տանջվել (զրկանքներից, պայմաններից), նեղություններ կրել: 3. ցсм տառապել (հիվանդությունից): 4. տանջվել, տառապանք կրել (հոգեպես): Տե՛ս *Ա.Ս. Դարբիջյան*, նշվ. աշխ., էջ 467:

⁹ Чужа'к, - а, м. Странный, со странностями, чуждой человек. Նույն տեղում, էջ 725:

Чужа'к ա. տարօրինակ մարդ, տարավարքորդ: Նույն տեղում, էջ 1368:

Թեև *чужак*-ը գրքային բառ է, բայց կարծում ենք, որ փոխարինումը խոսակցական բառով արդարացված է ոճի պահանջով և համապատասխան խոսքաշարով, ըստ որի, երբ ծերուկը մահվան վերաբերյալ իր մտավախությունն է հայտնում, հարևան եզորը նրան հանգստացնում է պատմելով, թե ինչպես պատերազմի տարիներին, երբ ինքը վիրավորվում է, բժիշկն ասում է՝ եթե մարդ ուզենա ապրել, կապրի, եթե չուզենա, չի ապրի, այնպես որ ծերուկից է կախված մեռնել-ապրելը:

Կարծում ենք, որ ամենահաջող բառընտրությունը Հովհաննիսյանինն է՝ *ցնդած*: *А где шибко-то болит?* (էջ 36) նախադասության *шибко*¹⁰ խոսակցական ոճի բառը թարգմանել են այսպես.

Ամենաշատը ո՞րտեղդ ա ցավում... (Ա.Հ., էջ 271):

Իսկ որտե՞ղդ ա անչափ ցավում... (Ս.Ս.):

Իսկ որտե՞ղդ ա շատ ցավում... (Արմ.Ի.):

Ա.Ակրտչյանը վերոնշյալ բառը փոխարինել է *անչափ* ձևով, որը համարժեք չէ խոսքաշարին: Սխալ բառընտրության օրինակ է նաև *Hy пойдю я, дыдя Степан* (էջ 36) նախադասության մեջ *пойдю* բառի փոխարինումը արևմտահայերենյան *երթամ* ձևով. *Դե ես երթամ, քեռի Ստեփան* (Ս.Ս.):

Ուսումնասիրության ընթացքում նկատվել են հետևյալ թարգմանական անճշտությունները.

-Мать... А мать!- позвал он старуху свою... (էջ 35) նախադասությունը այսպես են թարգմանել. - *Կնիկ... Ա՛յ կնիկ, - կանչեց իր պառավին...* (Ա.Հ., էջ 270):

- *Մեր... Այ մե՛ր, - կանչեց իր պառավին ...* (Ս.Ս.):

- *Մեր... այ մե՛ր, - կանչեց նա իր պառավին ...* (Արմ.Ի.):

Եթե ռուսական իրականության մեջ ընդունված է սեփական կնոջը որոշակի տարիքում *մայր* (*մեր*) անվանել, ապա հայկական իրականության մեջ բացառվում է: Այս առումով ճիշտ է թարգմանել միայն Ա.Հովհաննիսյանը:

Ծերուկի վիճակը գնալով վատանում է, ախորժակ չունի, հրաժարվում է կնոջ առաջարկած բոլոր ուտելիքներից, բայց համոզված է, որ «կես բաժակ արաղը» իրեն կօգնի, «վայ թե արյունը գոնե մի քիչ խաղա»: Կինը, սակայն, վախենում է, որ դրանից ամուսինը կվատանա: Ծերուկը, իհարկե, բարկանում է ասելով.

Всю жизнь трясутся над ей, а не понимают. Водка – это первое лекарство. Сундуки какие-то (էջ 36):

Այս նախադասության *сундуки* բառը թարգմանել են այսպես.

Ամբողջ կյանքներդ դրա վրա դողում եք, ու չեք հասկանում. արաղն ամենաառաջին դեղն ա: Դղում գլուխներ... (Ա.Հ., էջ 272):

¹⁰ Шибко, нареч. (прост.) То же, что очень. См у С. И. Ожезова, նշվ. աշխ., էջ 731:

Шибко մկր.. խսկց. 1. (быстро) արագորեն, արագությամբ, սրընթաց:

2. խիստ ուժեղ, սաստիկ, ուժգին, շատ: См у А. Ա. Դարիբյան, նշվ. աշխ., էջ 1377:

- Դու, ինչ ա, ըսկի տեսել ես արադը վնաս տա, - նեղացավ ծերուկը, - ամբողջ կյանքում դողում եք նրա վրա, ըտենց էլ չհասկանալով, որ արադը՝ առաջին դեղն է: Ոնց որ անհասկացողներ... (Ս.Մ.):

Ամբողջ կյանքում չեք հասկանում... արադը՝ առաջին դեղն ա: Ոնց որ սնդուկներ... (Արմ.Ի.):

Ա.Յովհաննիսյանն ու Ս.Սկրտչյանը ճիշտ են թարգմանել, իսկ Արմ. Ինճիկյանը չի նկատել, որ ռուսերեն խոսքաշարում *судьба* բառը փոխաբերական իմաստով է գործածվել իբրև «դատարկամիտներ, անհասկացողներ»:

Այժմ անցնենք դարձվածային միավորների թարգմանությանը՝ նկատելով, որ դրանց շնորհիվ է գեղարվեստական խոսքը դառնում ավելի կենդանի, պատկերավոր ու տպավորիչ:

«Դարձվածքները ժողովրդի հոգևոր մշակույթի հարստությունն են և արտահայտում են լեզվի ազգային ինքնատիպությունն ու յուրահատկությունը: Դարձվածքներում պատկերավոր մտածողության շնորհիվ իրենց արտահայտությունն են գտել ժողովրդի պատմական հարուստ կենսափորձը, նրա պատկերացումները օբյեկտիվ աշխարհի առարկաների և երևույթների մասին, վերաբերմունքը՝ մարդկային հարաբերությունների նկատմամբ»¹¹:

Շուկչիհի լեզվին խոսակցական երանգ են հաղորդում ոչ միայն խոսակցական ոճի բառերը, այլև դարձվածքները, որոնք ժողովրդական ծագում ունեն: Կինը համոզված է, որ ամուսնու թուլության պատճառը չուտելն է, և ցանկանում է իրենց միակ հավը մորթել, մսաջուր եփել և կերցնել ամուսնուն, բայց ծերուկը առարկում է՝ ասելով, որ մեկ է, ինքը չի ուտելու, հավն էլ իզուր տեղը չմորթեն: Այդ ժամանակ կինը բարկանում է և ասում.

*Дя бог уяс с ей, с куркой. Не только ба...*¹² (էջ 36):

Ա.Յովհաննիսյանը այս նախադասության ընդգծված դարձվածքը թարգմանել է հականիշային համարժեքով արտահայտելով գռեհկաբանությամբ. *Գրողի ծոցն ըլնի հավը: Ակիտսացի...* (էջ 272):

Իսկ Ս.Սկրտչյանն ու Արմ.Իճիկյանը թարգմանել են այսպես.

է՛, աստված հավի հետ: Ակիտս՝ս ա խի... (Ս.Մ.):

Ա, դե աստված նրա հետ, էդ հավի, ափսոս չի... (Արմ.Ի.):

Թեև վերջիններս ճիշտ են պատճենել դարձվածքի իմաստը, սակայն կարծում ենք, որ Ա.Յովհաննիսյանը ավելի ճիշտ լուծում է գտել՝ որոշակի «սրություն», ընդգծվածություն հաղորդելով խոսքին:

¹¹ Ա.Ս.Սուրբասյան, Ս.Ա.Գալստյան, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևան, 1975 թ., էջ 5:

¹² Ռուս-հայերեն դարձվածաբանական բառարան, Երևան, 1975 թ., էջ 15:

Երբ ծերուկի դրությունն ավելի է վատթարանում, «պառավը» լացա-կումած խնդրում է մի քիչ էլ դիմանալ՝ վկայակոչելով հարևան Եգորի խոսքերը, թե շատ դարդ չանի: Բայց ծերուկը բարկանում է՝ ասելով, որ առողջ մարդը երբեք չի հասկանա հիվանդի «հալից»:

Много он понимает! Он здоровый как бык... (էջ 38):

Ընդգծված դարձվածքը Ա.Յովհաննիսյանը թարգմանել է նկարագրական ձևով:

Շատ ա հասկանում: Սրբի մեան առողջ ա (էջ 274):

Ս.Սկրտչյանն ու Արմ.Ինճիկյանը ուղղակի պատճենել են:

Շատ ա՝ հասկանում մա: Եզան պես առողջ ա մա (Ս.Ս.):

Շատ ա մա հասկանում: Եզի մեան առողջ ա (Արմ.Ի.):

Այս դարձվածքը կարելի էր արտահայտել նաև այլ կերպ՝ *բողկի կտոր, բողկի պես առողջ*, իսկ ընդհանրապես, ըստ բառարանային բացատրության, այն նշանակում է «շատ առողջ է, պնդակազմ է»¹³: Կարծում ենք, որ երեք լուծումներն էլ սխալ չեն:

Да брось ты դարձվածքային արտահայտությունը Ա.Յովհաննիսյանը թարգմանել է գռեհկաբանությամբ:

Է, ռադ արա՜ (էջ 271):

Ս.Սկրտչյանը՝ *Դե ծեռ քաշի դու էլ*, Արմ.Ինճիկյանը՝ *Դե վերջ տուր* տարբերակով: Իբրև հավելում ասենք, որ ամեն ժողովուրդ ունի միայն իր կողմից ստեղծած, խորապես ազգային դարձվածքների ընտրանի, որոնք ձևավորվել են սեփական կյանքի ու կենցաղի, ազգային պատկերավոր մտածողության հիման վրա և ենթակա չեն բառացի թարգմանության:

Քերականական մակարդակում քննության առարկա ենք դարձրել հետևյալ փոխակերպումները: *Такая тоска под сердцем* (էջ 35) նախադասությունը թարգմանել են. *Այնպես տրտմած էր սիրտը...* (Ա.Յ., էջ 270): *Սիրտն այնպես մռայլ էր...* (Ս.Ս.): *Ենպիսի մի անձուկ էր սրտում...* (Արմ.Ի.):

Ա.Յովհաննիսյանն ու Ս.Սկրտչյանը որոշչային կառույցը փոխակերպել են պարագայական կառույցի: Ճիշտ է թարգմանել Արմ.Ինճիկյանը: Կարելի էր թարգմանել նաև այսպես. *Այնպիսի թախծ կամ տխրություն կար սրտում*:

Пришел Егор, соседский мужик (էջ 35) նախադասության *соседский мужик* կառույցը ճիշտ են փոխակերպել Ս.Սկրտչյանն ու Արմ.Ինճիկյանը:

Եկավ Եգորը, հարևան գյուղացին (Ս.Ս.): *Եկավ Եգորը՝ հարևան գյուղացին* (Արմ.Ի.): Իսկ Ա.Յովհաննիսյանը՝ ոչ. *Եկավ Եգորը՝ հարևան մարդ էր* (էջ 270):

Կարծում ենք, որ առավել ընդունելի կլիներ *Եկավ հարևան Եգորը* ձևը, որը քերականորեն չի պատճենում ռուսերեն արտահայտությունը, բայց պահպանում է խոսքի էությունը:

¹³ Տե՛ս Ռուս-հայերեն դարձվածաբանական բառարան, Երևան, 1979 թ., էջ 28:

Շուկշինը հերոսների հոգեբանական կերտվածքը բացահայտել է երկխոսությունների միջոցով, որոնց մեջ հաճախ բացակայում են նախադասություններ, բառեր (այդ պատճառով էլ ամբողջ պատմվածքում գերակշռում են կախման կետերը), սակայն խոսքաշարից միտքը հասկացվում է:

Հեղինակը հաճախ ոճական նկատառումներով (հավանաբար ընթերցողին որոշակի լարվածության մեջ պահելու համար) չի ավարտում միտքը, ընդհատում է առաջացնելով հնչերանգային անավարտվածություն, որը նույնպես հասկանալի է դառնում խոսքաշարից: Օրինակ *Հրես վրա կգամ: Ոտերս արդեն սառան... Օ'խ, աստված, աստված... -Ծերունին խորը շունչ քաշեց: -Տեր աստված... Վայ թե իսկականից կաս, կներես ինձ՝ մեղավորիս:*

Դե, ուրեմն, ինձ էլ կներես հալիվոր, թե մի բանում մեղավոր եմ եղել ... ևն (Ա.Հ. էջ 274):

Պետք է նշել, որ թարգմանիչները հիմնականում ճիշտ են փոխադրել երկխոսությունները: Ամփոփելով ասելիքը՝ ցանկանում ենք նշել թարգմանվածքների արժանիքներն ու որոշ թերություններ:

Բավական շատ են բնագրի բովանդակությամբ անմիջաբար չպայմանավորված լեզվածները, խոսակցական ցածր ոճի բառերն ու արտահայտությունները մեծ մասամբ փոխարինված են համագործածական, երբեմն նույնիսկ գրքային, բարձր ոճի բառերով, նկատվում են ոճական անհամարժեքության դեպքեր, բայց թարգմանիչները, որոշ բացառություններով հանդերձ, կարողացել են լուծել գեղարվեստական թարգմանությանը առաջադրված պահանջները, այսինքն Շուկշինի նկարագրած գեղարվեստական իրականությունը ճիշտ են ներկայացրել հայերեն լեզվով՝ պահպանելով ստեղծագործության ոճական առանձնահատկություններն ու բովանդակային համապատասխանությունը և մասնակիորեն հասել են իմաստային, ոճական, գործաբանական համարժեքության, այսինքն՝ նույնականության:

Զթերագնահատելով Ս.Մկրտչյանի և Արմ.Ինճիկյանի աշխատանքը՝ ցանկանում ենք նշել, որ Ա.Հովհաննիսյանին (թերություններով հանդերձ և նկատի առնելով Շուկշինի բազում ստեղծագործությունների թարգմանությունը) հաջողվել է ընթերցողին հաղորդակից դարձնել Շուկշինի ներաշխարհի, նրա հերոսների հոգեկան նկարագրի բացահայտմանը, որն արդյունք է նրա գրական նուրբ հոտառության, ռուսաց լեզվի իմացության, և որով էլ պայմանավորված է թարգմանչի ինքնատիպ ձեռագիրը: Փաստենք, որ յուրաքանչյուր թարգմանիչ պետք է ոչ միայն գերազանց իմանալ այն լեզուն, որով թարգմանում է, այլև բնագրի լեզուն, ծանոթ լինի այն միջավայրին, որը ներկայացվում է և լեզվական համապատասխան միջոցներով կարողանա վերարտադրել տվյալ իրականությունը: